ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Կիրակի, նոյեմբերի 6-ին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման և գահակալության 6-րդ տարեդարձը: Հայոց բոլոր եկեղեցիներում հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ս. Պատարագ մատուցվեց հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի: Պատարագիչն էր ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Սրբազան արարողության ընթացքում Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզելով՝ շնորհավորեց Վեհափառ Հայրապետին գահակալության տարեդարձի առիթով՝ աղոթելով, որպեսզի «Հայրապետական մականը մնա ծաղկյալ», և երկար տարիներ Հայրապետական նորանոր իրագործումներով և բեղուն ծառայությամբ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու նավը առաջնորդվի դեպի առավել բարձունքներ:

Որպես բնաբան ունենալով Ղուկաս ավետարանչի «Մի երկնչիր, բայց միայն հաւատա, եւ կեցցէ» (Ղուկ. Ը 51) խոսքը՝ Սրբազան Հայրն ասաց. «Քրիստոսի այս խօսքը, սիրելի Վեհափառ Հայրապետ, Դուք դարձուցած էք Ձեր սրտի աղօթքը: Այս աղօթքով գահակալութեան Ձեր առաջին օրէն սկսեալ աներկիւղ ու անկշռելի հաւատքով նոր կեանք կը ներշնչէք բոլորիս... Եթէ կը սիրենք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, որուն ծննդավայրն է Սուրբ Էջմիածինը, ապա պարտ ենք համախմբուելու Ազգիս Վեհափառ Հայրապետի շուրջը, զօրացնելու Անոր բազուկներուն ուժը, որպեսզի առաւել բարգաւաճ դառնա Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Եկեղեցին ի Հայաստան, յԱրցախ և ի Սփիւռս աշխարհի:

Աներկիւղ պահենք մեր հաւատքը: Անսանք Քրիստոսի խօսքին և մեր մէջ պիտի զգնենք վերակերտումի ոգին՝ ի խնդիր Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Եկեղեցւոյ եւ ի բարգաւաճումն Սուրբ Էջմիածնի եւ յուրախութիւն մեզ եւ Վեհափառ Հայրապետին» (տե՛ս էջ 42):

Ս. Պատարագի ավարտին Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, թեմական առաջնորդներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ազգային բարերարներ, ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի թեմական խորհրդի անդամներ և բազմաթիվ հավատացյալներ, ովքեր եկել էին իրենց նվիրումն ու սերը հայտնելու Մայր Աթոռին ու նրա արժանընտիր Գահակալին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ